Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2013թ. ապրիլի 22-ին տեղի ունեցած «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում Հայաստանի գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի հերթական հանդիպման

քաղաք Երևան	Մասնակցում էին՝
Տիգրան Գևորգյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ, ԲԿԳ աշխատանքային խմբի ղեկավար
Եղիշե Կիրակոսյան	ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ
Վիգեն Կտիկյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Արմեն Խուդավերդյան	Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ
Արման Հակոբյան	ՀՀ ԱԳՆ Ամերիկայի վարչության պետ
Լիանա Դոյդոյան	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ, ծրագրերի իրականացման ղեկավար
Վարուժան Հոկտանյան	“Transparency International” ՀԿ, գործադիր տնօրեն
Լևոն Բարսեղյան	Գյումրու ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի խորհրդի նախագահ
Կարեն Բակոյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարության տեղական ինքնակառավարման վարչության բաժնի պետ
Վահե Մահտեսյան	ՀՀ ֆինանսների նախարարության պետական ներքին ֆինանսական հսկողության և պետական գնումների մեթոդաբանության վարչության ֆինանսական կառավարման և հսկողության պաժնի պետ
Վարդուհի Ասատուրյան	ՀՀ ԱԳՆ միջազգային կազմակերպությունների վարչության ՄԱԿ բաժնի վարիչ
Արամ Ասատրյան	ՀՀ կառավարության աշխատակազմի հանրային կառավարման հարցերով խորհրդատու

Գրիգորի Դավթյան	ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման և հարկման ընթացակարգերի վարչության հարկ վճարողների սպասարկման և ուսուցման բաժնի պետ
Արթուր Պետրոսյան	ՀՀ ԱԳՆ ներքին վերահսկողության բաժնի պետ
Արամ Մխիթարյան	«Հելիքս Քընսալթինգ» ընկերության տնօրեն
Արև Մովսիսյան	ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն, ծրագրի ղեկավար
Քեթրին Դոու	ԱՄՆ ՄԶԳ, ժողովրդավարության և կառավարման հարցերով պատասխանատու
Ռոզա Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ
Անի Հակոբյան	ՀՀ արդարադատության նախարարության համակարգի իրավական ապահովման վարչության իրավաբանական անձանց պետական գրանցման, քաղաքացիական կացության ակտերի գրանցման և նոտարական համակարգի օրենսդրական ապահովման բաժնի գլխավոր մասնագետ
Շուշանիկ Աղաբաբյան	Թարգմանիչ

2013թ. ապրիլի 22-ին տեղի ունեցավ «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնությունում Հայաստանի գործողությունների ծրագրից բխող աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի հերթական հանդիպումը: Հանդիպման օրակարգի առաջին հարցը վերաբերում էր ԲԿԳ հայաստանյան գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորու-թյունների կատարման ընթացքում ձեռք բերված արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև դրանց հետագա իրականացմանն առնչվող հարցերի քննարկմանը: Հարցի շրջանակներում հանդիպման մասնակիցներն անդրադարձան գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորություններից յուրա-քանչյուրի կատարման ընթացքին:

<u>Միասնական վճարումների համակարգի ներկայացում (պորտալ)</u>

Պարտավորության շրջանակներում ՀՀ կառավարության աշխատակազմի հանրային կառավարման հարցերով խորհրդատու Ա. Ասատրյանը ներկայացրեց e-payments համակարգը, որը գործում է շուրջ մեկ տարի: Համակարգը հնարավորություն է ընձեռում բոլոր պետական մարմինների կողմից մատուցվող

ծառայությունների դիմաց վճարները կատարել էլեկտրոնային եղանակով: «ԻԱԿ» ՀԿ ծրագրերի իրականացման ղեկավար Լ. Դոյդոյանի այն հարցին ի պատասխան՝ կան արդյոք վիճակագրական տվյալներ համակարգից օգտվողների թվի մասին, Ա. Ասատրյանը նշեց, որ համակարգից մոտավորապես 4,000 օգտվող է եղել:

Պարտավորությունը կատարված և ավարտված է:

<u>Պետավտոտեսչության ոլորտի բարեփոխումներ՝ մեքենաների գրանցման, վարորդական իրավունքի տրամադրման, տուգանքների և վճարումների էլեկտրոնային համակարգի ներդրում</u>

Ստեղծվել է մեկ միասնական կենտրոն, որտեղ կենտրոնացված են պետավտոտեսչության կողմից իրականացվող բոլոր գործառույթներն ու մատուցվող ծառայությունները: Կենտրոնը հնարավորություն է ընձեռում իրականացնելու այնպիսի գործարքներ, ինչպիսիք են՝ մեքենայի գրանցում, վարորդական իրավունքի տրամադրում, տեխնիկական անձնագրի ձեռքբերում, առքուվաճառք և այլն:

Պարտավորությունը կատարված և ավարտված է:

<u>«Mail-Armenia» համակարգի ներդրում</u>

Անձնագրերի հետ միասին ՀՀ քաղաքացիներին տրամադրվելու է անձնական էլեկտրոնային հասցե: Պետության կողմից բոլոր տեսակի ծանուցումները կներկայացվեն այդ հասցեով: Պարտավորության կատարմանն ուղղված աշխատանքներն արդեն մեկնարկել են: Համապատասխան օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ կատարելու նպատակով արդեն իսկ մշակվել են իրավական ակտերի նախագծեր, որոնք մոտ ապագայում ներկայացվելու են համապատասխան մարմինների հաստատմանը: ԵՄ կողմի հետ ձեռք բերված համատեղ պայմանավորվածության համաձայն՝ փորձնական տարբերակի մեկնարկից հետո համակարգն ամբողջությամբ կկիրառվի ՀՀ ողջ տարածքում: Նախատեսված է պարտավորությունը կատարել և ավարտել մինչև այս տարվա վերջ:

ՀՀ ԱԳՆ ներքին վերահսկողության բաժնի պետի պաշտոնակատար Ա. Պետրոսյանի այն հարցին՝ արդյոք այդ հասցեներով ստացված ծանուցումներն իրավական տեսնակյունից համարվելու են պատշաճ, Ա. Ասատրյանը պատասխանեց, որ իրավական դաշտում ներկայումս կատարվող համապատասխան փոփոխություններն անպայմանորեն հաշվի կառնեն այն հանգամանքը, որ էլեկտրոնային եղանակով ներկայացված ծանուցումը համարվի որպես պաշտոնական ծանուցում:

Լ. Դոյդոյանն առաջարկեց, որպեսզի տեղեկատվություն ստանալու վերաբերյալ էլեկտրոնային եղանակով պետական կառույցներին ուղղված հարցումները համարվեն պատշաճ հարցումներ:

Հարցի համատեքստում ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տ. Գևորգյանը նշեց, որ հարցի վերաբերյալ որոշումը կընդունվի առաջիկա մեկից երկու ամսվա ընթացքում:

«E-statistics» համակարգի ներդրում

Համակարգի միջոցով պետական վիճակագրական ծառայությունը հաշվետվությունները կարող է ներկայացնել օնլայն տարբերակով: Պարտավորության կատարմանն ուղղված աշխատանքներն արդեն մեկնարկել են. ներկայումս իրականացվում են գույքագրման աշխատանքներ, վերանայվում են վիճակագրական ծառայության հաշվետվությունների բոլոր ձևերը, վեր են հանվում առկա հնարավոր կրկնությունները, ինչպես նաև քայլեր են ձեռնարկվում այդ կրկնությունները բացառելու ուղղությամբ: Գույքագրման փուլին հաջորդելու է ծրագրի նախագծման աշխատանքների մեկնարկը, որը, հավանաբար, տեղի կունենա ամռանը (հունիս-հուլիս ամիսներին), իսկ ծրագրի ավարտը նախատեսված է մինչև տարեվերջ:

Էլեկտրոնային համակարգի ներդրում հյուպատոսական ծառայություն-ների մատուցման համար

Համակարգն ապահովում է էլեկտրոնային կապ արտաքին գործերի նախարարության և դեսպանությունների միջև, ինչպես նաև հնարավորություն է տալիս քաղաքացիներին մատուցվող մի շարք ծառայություններ իրականացնել առավել օպերատիվ կերպով: Գործող 45 կետերից 15-ը հաջողությամբ միացել են համակարգին, ներկայումս աշխատանքներ են տարվում մյուսներին ևս միացնելու համակարգին, ինչպես նաև փորձ է արվում մոտ 30-40 տեսակի ծառայություններից ամենից կարևորները ներառել հիշյալ համակարգում: Ներկայումս նման կերպ իրականացվում են քաղաքացիների անձնագրերի երկարաձգման, ինչպես նաև վերադարձի վկայականի տրամադրման ծառայությունները:

Վերոնշյալ համակարգի հիման վրա ավելացվելու է նաև հյուպատոսական հաշվառման բաղադրիչը, որը ենթադրում է ինստիտուցիոնալ փոփոխություն. մինչ օրս վեց ամսից ավելի արտասահմանում գտնվող ՀՀ քաղաքացիները պարտավոր էին այդ մասին տեղեկացնել դիվանագիտական մարմիններին: Այժմ մոտեցումը փոխվում է. պարտադիր պահանջը վերածվում է կամավորության սկզբունքի, իսկ հաշվառման կանգնելը հնարավոր կլինի իրականացնել էլեկտրոնային կայքի միջոցով: Հարցի առնչությամբ օրենսդրական փոփոխությունների փաթեթն ուղարկվել է ՀՀ կառավարություն, որից հետո ՀՀ կառավարության որոշմամբ կմեկնարկի համապատասխան ընթացակարգերի մշակման փուլը (նախատեսվում է փոփոխություններ կատարել «Բնակչության պետական ռեգիստրի մասին» ՀՀ օրենքում, «Հյուպատոսական ծառայության

մասին» ՀՀ օրենքում, «Վարչական իրավախախտումների մասին» ՀՀ օրենքում, որով նախատեսվում էր տուգանք վեց ամսից ավել արտասահմանում գտնվելու մասին դիվանագիտական մարմիններին չհայտնելու համար, ինչպես նաև ՀՀ մաքսային օրենսգրքում: Փոփոխությունների համաձայն՝ հաշվառումն այսուհետ ունի զրոյական դրույքաչափ):

Հարցի համատեքստում ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավարի տեղակալ Տ. Գևորգյանը հիշատակեց ՀՀ վարչապետի համապատասխան հանձնարարականի մասին, համաձայն որի ՀՀ ԱԳՆ կայքում պետք է նախատեսվի էջ, որը հնարավորություն կտա ՀՀ քաղաքացուն ցանկացած վայրից ներկայացնելու հավառման հայտ: Ա. Պետրոսյանը պատասխան խոսքում նշեց, որ նախապատրաստական աշխատանքներ են տարվում կայքի ստեղծման ուղղությամբ: Միաժամանակ, անհրաժեշտ է կայքը ստեղծել այնպես, որ հնարավոր չլինի կեղծել հաշվառման կանգնելու գործողությունը: Հարցի առնչությամբ Տ. Գևորգյանն առաջարկեց ապահովել ՀՀ վարչապետի վերոնշյալ հանձնարարականի լիարժեք կատարումը:

<u>Քաղաքային համայնքներում էլեկտրոնային փաստաթղթերի շրջանառության համակարգի ներդրում</u>

ՀՀ 48 քաղաքապետարաններից 44-ում իրականացվել են էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի ներդրմանն ուղղված անհրաժեշտ աշխատանքները, և հնարավորություն է ստեղծվել էլեկտրոնային փաստաթղթեր փոխանակել պետական մարմիններում շահագործվող «Mulberry» էլեկտրոնային փաստաթղթաշարժի համակարգի հետ:

Աշխատանքները դեռևս չեն ավարտվել Գյումրու, Ախթալայի, Շամլուղի և Դաստակերտի քաղաքապետարաններում:

Մոտ 300 բնակիչ ունեցող Դաստակերտի քաղաքապետարանում ուսուցման դասընթացներին մասնակցելու համար չկան համապատասխան կադրեր, իսկ Լոռու մարզի Ախթալայի և Շամլուղի համայնքներում առկա են տեխնիկական բնույթի խնդիրներ՝ կապված կապի ոչ բավարար որակի հետ: Այդ կապակցությամբ դիմել են համապատասխան բջջային օպերատորներին՝ վերոնշյալ խնդրին լուծում տալու նպատակով:

Գյումրու քաղաքապետարանում աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են, քանի որ քաղաքապետարանը նպատակ ունի զուգահեռաբար ներդնել նաև «Մեկ պատուհան» համակարգ: Քաղաքապետարանի պաշտոնյաների հավաստմամբ՝ աշխատանքներն ավարտին կհասցվեն հունիս ամսվա ընթացում:

<u>Հարկային վարչարարության գործընթացներում թափանցիկության և օբյեկտիվության խթանում</u>

Հարկային և մաքսային մարմինների կողմից հարկ վճարողներին մատուցվող էլեկտրոնային ծառայությունների տեսակների և քանակի ավելացման ուղղությամբ վերջին ժամանակահատվածում կատարվել են հետևյալ աշխատանքները. 2012թ. շարունակվել են հարկային օրենսդրական փոփոխություններով պայմանավորված հարկային հաշվետվական նոր ձևերի ծրագրավորման աշխատանքները: Արդյունքում՝ էլեկտրոնային եղանակով հարկային հաշվետվությունների ներկայացման ծրագրային համակարգում ներկայումս ներդրված են 61 հաշվետվական տեսակներ:

2012թ. ընթացքում հարկային մարմիններին էլեկտրոնային հաշվետվություններ ներկայացնող հարկ վճարողների թիվն ավելացել է մոտ 3 անգամ՝ կազմելով 20530: Վերջինս արդյունք է տարվա ընթացքում իրականացված իրազեկման աշխատանքների, որոնք ուղղված են եղել փոքր և միջին ձեռներեցների շրջանում էլեկտրոնային ծառայությունների կիրառելիության խթանմանը: Օրինակ, ՀՀ ԿԱ ՊԵԿ նախաձեռնությամբ փոփոխություն է կատարվել ռիսկերի գնահատման հիման վրա հարկային ստուգման ենթակա հարկ վճարողների ընտրության ավտոմատացված համակարգում (ՌՉՍՀ)՝ նախատեսելով ռիսկայնության նվազեցում մինչև 58,35 մլն. դրամ շրջանառություն ունեցող այն հարկ վճարողների համար, ովքեր օգտվում են էլեկտրոնային հաշվետվությունների համակարգից: Միաժամանակ, մշակվել, տպագրվել և բաշխվել են մոտ մեկ տասնյակ անվանում բուկլետներ և պաստառներ, կազմակերպվել են հանրային տեղեկատվական շնորհանդեսներ և դասընթացներ:

Նույն ժամանակաշրջանում էլեկտրոնային հարկային հաշիվների դուրսգրման համակարգում հարկ վճարողների կողմից դուրս են գրվել և ՀՀ ԿԱ ՊԵԿ կողմից էլեկտրոնային մշակման ենթարկվել շուրջ 10,2 մլն. հարկային հաշիվներ:

Ստացվող հարկային հաշվետվությունների թվում Էլեկտրոնային եղանակով ներկայացված հարկային հաշվետվությունների տեսակարար կշիռը շարունակաբար աճել և 2013թ. առաջին եռամսյակում հասել է մոտ 56 տոկոսի: **Մինչև տարեվերջ հարկատուների 90 տոկոսի հաշվետվությունները կմշակվեն առցանց:**

2012թ. ընդլայնվել է հարկ վճարողներին հիշեցում-ծանուցումների ուղարկման ավտոմատացված համակարգը: Իսկ ԱԱՀ վճարողների հաշվառման համարների ներդրման արդյունքում առավել ճշգրտվել է «Հարկատու 3» էլեկտրոնային կառավարման համակարգում գործող հարկային հաշիվների համադրման արդյունքում անհամապատասխանությունների մասին ծանուցումների ենթահամակարգը:

Ավելացվել են նոր մոդուլներ հարկ վճարողի էլեկտրոնային դարանում, այդ թվում՝ «Հարկ վճարողներ» մոդուլը, որի միջոցով հարկ վճարողը կարող է

համառոտ տեղեկություններ ստանալ ցանկացած գրանցված կազմակերպության վերաբերյալ, այն է՝ ՀՎՀՀ-ն, հաշվառման ՀՏ-ն, հասցեն, գործունեության ոլորտը: Իսկ նոր «Աշխատողներ» մոդուլի միջոցով հարկ վճարողը կարող է դիտել իր կողմից գրանցված աշխատողների տվյալները, խմբագրել և արտածել վերջիններս:

Աշխատանքներ են տարվել մաքսային հայտարարագրերի ավտոմատ լրացման համակարգում հայտարարատուների համար հաշվետվությունների ձևավորման համակարգ մշակելու ուղղությամբ:

Պիլոտային փուլում է գտնվում ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրվող դեղերի և դեղամիջոցների ներմուծման հավաստագրերի «մեկ պատուհան» սկզբունքով տրամադրման համակարգը: Վերջինիս ներդրման նախապատրաստական աշխատանքների շրջանակներում կազմակերպվել են դասընթացներ համակարգի պոտենցիալ օգտվողների համար, իրականացվել են ԱՏԳ մասնակիցների համակարգի ներդրման վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Հարկային և մաքսային ընթացակարգերի հրապարակայնության և թափանցիկության աստիճանի բարձրացման նպատակով 2012թ. ընթացքում կատարվել են հետևյալ աշխատանքները. շարունակվել են մշակվել և հրապարակվել ամենամսյա «ՀՀ ԿԱ ՊԵԿ գործունեության համառոտագիրը (Digest)», որտեղ ներկայացվել են նոր ընդունված իրավական ակտերը և դրանց հակիրճ մեկնաբանությունները, և եռամսյա «Մաքսատուն» և «Հարկատու» լայնաֆորմատ ամսագրերը, որտեղ ոչ միայն լուսաբանվել են գերտատեսչության իրականացրած աշխատանքները, այլև հարկատուների անդրադարձները ՀՀ ԿԱ ՊԵԿ նախաձեռնած նորամուծություններին և կատարված աշխատանքներին:

Շարունակվել են պարբերաբար հրապարակվել «Խոշոր հարկ վճարողների 3 մլն. դրամ և ավելի պարտադիր սոցիալական ապահովության վճարներ վճարած ապահովադիրների», «Տարվա արդյունքներով՝ 50 մլն. դրամ և ավելի շահութահարկ վճարած հարկ վճարողների», «3 մլն. դրամ և ավելի եկամտահարկ վճարած հարկային գործակալների» և հարկային օրենսդրությամբ նախատեսված մյուս տեղեկատվական ցանկերը:

ՀՀ ԿԱ ՊԵԿ պաշտոնական ինտերնետային կայքերում տեղադրվել են հասարակական հետաքրքրություն ունեցող օրենսդրական ակտերի նախագծերը, գործող օրենսդրական ակտերը, հաշվետվությունների ձևաթղթերը և հարկ վճարողների իրազեկման համար նախատեսված այլ տեղեկատվություն:

2012թ. ընթացքում երեք հեռուստաընկերություններով պատրաստվել են շուրջ 10 հեռուստահաղորդումներ, որոնց միջոցով լուսաբանվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում կատարվող բարեփոխումների գործընթացը: Իսկ 2013թ. հունվարի 14-ից «Արմնյուզ» հեռուստաընկերության եթերում ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը մեկնարկել է «TAX

ինֆո» հաղորդաշարը, որը ներկայացնում է հարկային և մաքսային օրենսդրական ու վարչարարական նորությունները, պատասխանում գործարարների հարցերին: Միջինում 15 րոպեանոց հաղորդումները հեռարձակվում են ամեն երկուշաբթի՝ շաբաթվա ընթաքում 2 կրկնություններով:

Հարկային մարմիններում հարկ վճարողների սպասարկման ենթակառույցների զարգացման նպատակով կատարվել են հետևյալ աշխատանքները. 2012թ. օգոստոսից վերադաս հարկային մարմնում գործարկվել է վերանորոգված արդիական բազմաֆունկցիոնալ սպասարկման սրահ, որն ապահովում է այցելուների ընդունելության կազմակերպումը, նրանց կողմից փոստով և առձեռն ներկայացվող դիմումների և այլ տեղեկությունների ընդունումը, ինչպես նաև մատուցում իրազեկման ծառայություններ և սպասարկում էլեկտրոնային հաշվետվություն ներկայացնող հարկ վճարողներին:

2012թ. Վանաձորի տարածքային հարկային տեսչությունում վերանորոգվել և բացվել է հարկ վճարողների սպասարկման նոր սրահ: Արդյունքում՝ հարկային մարմինների համակարգում ներկայումս գործում են հարկ վճարողների սպասարկման 10 կենտրոն, որոնք շահագործում են 13 սպասարկման սրահներ: Ներկայումս սպասարկման կենտրոններ գործում են Սևանում, Վանաձորում (երկու սրահ), Գյումրիում և Եղեգնաձորում:

2012թ. տարեսկզբին գործարկվել են ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային ծառայությունների նոր ձևաչափի վեբկայքերը, որոնք ստեղծվել են կիրառելով ժամանակակից տեխնոլոգիաներ և մոտեցումներ, միաժամանակ էապես ավելացրել օգտվողներին մատուցվող տեղեկատվության և ծառայությունների ծավալները:

2012թ. տարեվերջին ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը «Հայփոստ» ՓԲԸ-ի հետ համատեղ մեկնարկել է հարկ վճարողների սպասարկման կետերի ցանցի ներդրման լայնածավալ գործընթաց, որի արդյունքում ակնկալվում է գալիք տարիներին գործարկել մոտ 140 նման սպասարկման կետեր հանրապետության ամբողջ տարածքով սփռված փոստային բաժանմունքներում՝ ապահովելով հարկ վճարողների սպասարկման ծառայությունների հասանելիության բարձրացումը: Ակնկալվում է, որ սպասարկման կետերը կմատուցեն հարկ վճարողներին առավել պահանջված ծառայությունները նախևառաջ այն բնակավայրերում, որտեղ չկան ՀՀ ԿԱ ՊԵԿ սպասարկման կենտրոններ:

2012թ. շարունակել է աճել ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների հեռախոսազանգերի սպասարկման կենտրոնի կողմից հեռախոսակապով և էլեկտրոնային եղանակով տրամադրվող պարզաբանումների թվաքանակը՝ հասնելով 69 հազարի, այդ թվում՝ 92 տոկոսը՝ հարկային օրենսդրության և

վարչարարության, իսկ 7 տոկոսը՝ մաքսային օրենսդրության և վարչարարության վերաբերյալ:

ԲԿԳ Հայաստանի գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունը, այն է՝ սպասարկման ծառայություններից օգտվող հաճախորդների թիվը մեծացնել 15 տոկոսով, կատարված է:

Հարկային և մաքսային մարմինների կողմից ռեսուրսների արդյունավետ կառավարման նպատակով 2012թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ կազմում ձևավորվել է ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ներքին աուդիտի վարչությունը, հաստատվել են վարչության գործառույթները, անձնակազմի պաշտոնեական անձնագրերը և «ՀՀ ԿԱ ՊԵԿ ներքին աուդիտի կանոնակարգը»: Վարչության անձնակազմը վերապատրաստվել է ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպ-ված «Հանրային հատվածի ներքին աուդիտ» և «Ներքին աուդիտի միասնական ավտոմատացված համակարգ» թեմաներով վերապատրաստման դասընթացնե-րին, ստացել հավաստագրեր, ինչպես նաև մասնակցել ISO/IEC 27001:2005 տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի ներդրման նպատակով կազմակերպված խորհրդատվական ծառայություն իրականացնելու համար ստեղծված մասնագիտական խմբերում: Տարվա ընթացքում ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի հրամանների հիման վրա վարչությունն իրականացրել է ՀՀ ԿԱ ՊԵԿ համակարգում կատարված գնումների, ձեռք բերված ապրանքանյութական արժեքների մուտքագրման և ելքագրման աշխատանքների, գնված կամ այլ աղբյուրներից ստացված տեխնիկայի և էլեկտրոնային ծրագրերի առկայության և համապատասխանության նպատակային աուդիտներ:

Հարկային և մաքսային ծառայողների համար արդեն իսկ գործում են վարքագծի կանոններ: Ինչ վերաբերում է դրանց կատարելագործմանն ու կիրառելիությանն ուղղված անհրաժեշտ մեխանիզմների ձևավորմանը, ապա այդ հարցն ընդգրկված է ԱՄՆ ՄԶԳ հետ իրականացվող հարկային բարեփոխումների ծրագրում:

<u>Կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերանայում (Կարգավորման «Guillotine» ծրագիր)</u>

Ծրագիրն ուղղված է ավելորդ կարգավորումների կրճատմանը, գործարար միջավայրի բարելավմանը և հնարավոր ներդրումների ներգրավմանը: 2012թ. մայիսից գործարկվել է «Օրենսդրության կարգավորման ազգային կենտրոն» ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը, որի առջև բարեփոխումների խորհրդի կողմից դրվել է հանրային ծառայությունների, տրանսպորտի և առողջապահության ոլորտների ուսումնասիրությունը և համապատասխան իրավական ակտերի նախագծումը:

Հանրային ծառայությունների ոլորտի մասին օրենքների փաթեթը (վերաբերում է էներգետիկայի և հեռահաղորդակցության բնագավառներին) ԱԺ-ում անցել է երկու ընթերցում: Բարելավվում են, հիմնականում, հոսանքի միացման աշխատանքները քաղաքացիների կամ բիզնեսի կողմից, կարգավորվում է փոքր ՀԷԿ-երի կառուցման լիցենզավորման գործընթացը: Հեռահաղորդակցության ոլորտում կրճատվում է երկու տեսակի լիցենզիա, փոխարենը դրվում է ծանուցման մեխանիզմ: Կապի բնագավառում ներմուծվում է “number portability” գաղափարը. այսինքն՝ լինելով մի օպերատորի սպասարկման դաշտում, հնարավոր է կամավոր կերպով փոխել օպերատորին՝ առանց փոխելու հեռախոսահամարը:

Էապես պարզեցվել են տաքսի ծառայությունների հիմնման և գործունեության հետ կապված գործընթացները՝ կրճատվել են մի շարք տեղեկանքներ և քայլեր, որոնք մինչ այդ տաքսի ծառայությունը պարտավոր էր իրականացնել լիցենզիա ստանալու և գործունեություն ծավալելու համար: Փոփոխություններ են կատարվել նաև բեռնափոխադրումների ոլորտում:

Առողջապահության ոլորտի նախագծերը դեռևս քննարկման փուլում են: Դրանք, հինականում, վերաբերում են դեղատնային գործունեությանը, ինչպես նաև դեղերի գրանցման ընթացակարգին: Քննարկվող ոլորտում ՀՀ կառավարության կողմից զուգահեռաբար իրականացվում են նաև առավել խորքային բարեփոխումներ:

Ներկայումս հիմնարկի առջև դրված են հողային օրենսդրության բարեփոխումները, համապատասխան աշխատանքները կմեկնարկեն նաև հարկային և մաքսային ոլորտներում:

Պարտավորությունը կատարված է:

<u>Պաշտոնական ինտերնետային կայքերի բովանդակության ստանդարտացում</u>

ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության կողմից մշակվել է ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է սահմանել ստանդարտ չափորոշիչներ պետական գերատեսչությունների պաշտոնական կայք-էջերի համար: Միաժամանակ, սահմանված են նաև որոշակի պահանջներ պետական հիմնարկների համար (ինչ պարտադիր բովանդակություն պետք է ունենան կայքերը, ինչ պարբերականությամբ պետք է թարմացվեն դրանք և այլն): Վերոնշյալ կառավարության նախագիծը մշակվել է մի շարք հասարակա-կան կազմակերպությունների աջակցությամբ՝ քննարկվելով նաև տեխնիկական մասնագետների հետ: Տեխնիկական մասնագետների կողմից բարձրացված հարցադրումները հաշվի են առնված քննարկվող նախագծում: Ներկայումս ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությունն ուսումնասիրում է նախագծի

ֆինանսական գնահատականը, որն, ընդհանուր առմամբ, պետք է նախատեսվի պետական բյուջեից:

Պետական հատվածում ներքին աուդիտի համակարգի բարելավում

2012թ. ընթացքում շարունակվել են ներքին աուդիտի համակարգի ներդրման և հզորացման աշխատանքները՝ պետական ռեսուրսների կառավարման թափանցիկության առավել բարձր մակարդակ ապահովելու նպատակով: Այդ նպատակով մշակվել և հաստատվել են մի շարք իրավական ակտեր, այդ թվում՝ ՀՀ ֆինանսների նախարարի 17.02.2012թ. թիվ 143-Ն հրամանով հաստատվել են «Հայաստանի Հանրապետության հանրային հատվածի ներքին աուդիտի ձեռնարկների և ներքին աուդիտի կանոնակարգի մշակման ուղեցույցները», որոնք սահմանում են հանրային հատվածի կազմակերպություններում ներքին աուդիտի կազմակերպման, իրականացման և գնահատման բոլոր ընթացակարգերը՝ միջազգային չափանիշներին և լավագույն գործելակերպին համապատասխան:

2012թ. փետրվարի 23-ին ՀՀ ֆինանսների նախարարի թիվ 165-Ն հրամանով հաստատվել են նաև «Ներքին աուդիտի ստորաբաժանմանը և ներքին աուդիտի կոմիտեին ներկայացվող հիմնական պահանջները», որոնցով սահմանվել են ստորաբաժանման ստեղծմանը, հաստիքների նվազագույն քանակին, մասնագիտական փորձին և ներքին աուդիտի կոմիտեին ներակայացվող պահանջները:

ՀՀ կառավարության 11.08.2011թ. թիվ 1233-Ն որոշմամբ հաստատված «Ներքին աուդիտի համակարգի ներդրման ժամանակացույցի» համաձայն՝ ներքին աուդիտի ներդրումն իրականացվում է փուլային եղանակով՝ սկսած 01.04.2012թ.: Ներքին աուդիտի համակարգը արդեն ներդրված է 52 պետական կառավարման մարմիններում և Երևանի քաղաքապետարանում, իսկ քաղաքային մնացած համայնքներում ներդրումը նախատեսված է 2013թ. հունվարի 1-ից: Ներկայումս քաղաքային համայնքներում կատարվել են կառուցվածքային փոփոխություններ՝ 48 քաղաքային համայնքներից արդեն 44-ում ստեղծվել են ներքին աուդիտի ստորաբաժանումներ: Ախթալա, Շամլուղ և Դաստակերտ համայնքներում դեռևս ներդրված չէ ներքին աուդիտի համակարգը: Պետական ոչ առևտրային կազմակերպություններում և պետական մասնակցությամբ ընկերություններում ներքին աուդիտի ստորաբաժանումներ չեն ստեղծվել, և այդ լիազորությունները վերապահվել են իրենց կառավարման լիազոր մարմիններին: Նշված ստորաբաժանումների գործունեությունը, համաձայն «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի և ներքին աուդիտի նոր օրենսդրության, պետք է ուղղված լինի հանրային կազմակերպությունների արդյունքների բարելավմանը և մեծացմանը՝ կազմակերպության ռիսկերի կառավարման, հսկողության ու կառավարչական

գործընթացների համակարգված և կանոնակարգված գնահատման ու բարելավման միջոցով:

2012թ. ընթացքում «Ներքին աուդիտի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջն ապահովելու նպատակով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կազմակերպվել են «Հանրային հատվածի ներքին աուդիտ» թեմայով վերապատրաստման դասընթացներ, որոնց մասնակցել են պետական կառավարման մարմինների և Երևանի քաղաքապետարանի ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 160 աշխատակիցներ, որոնցից ներքին աուդիտորի որակավորում են ստացել 155-ը: Իսկ քաղաքային համայնքներից նշված դասընթացներին մասնակցել են ներքին աուդիտի ստորաբաժանումների թվով 50 աշխատակիցներ, որոնցից ներքին աուդիտորի որակավորում են ստացել 40-ը:

Միաժամանակ, մշակվել է «Ներքին աուդիտորի արհեստավարժության համապատասխան աստիճանը հաստատող որակավորման քննությունների անցկացման և ներքին աուդիտորի շարունակական մասնագիտական վերապատրաստման կարգերը հաստատելու մասին» ՀՀ ֆինանսների նախարարի հրամանի նախագիծը, որը ներկայացվել է շահագրգիռ մարմինների քննարկմանը: Կարծիքների ամփոփումից հետո նախագիծն օրենքով սահմանված կարգով կներկայացվի հաստատման: Իսկ մինչև վերոնշյալ կարգի ընդունումը ՀՀ ֆինանսների նախարարի հանձնարարությամբ ներկայումս սկսվել է ներքին աուդիտորների շարունակական մասնագիտական վերապատրաստում-ների իրականացման փորձնական գործընթացը:

Վ. Հոկտանյանի այն հարցին ի պատասխան, թե արդյոք ներդրվել է ռիսկերի գնահատման մեթոդոլոգիան, Վ. Մահտեսյանը նշեց, որ այդ հարցը կարգավորված է ներքին աուդիտի ձեռնարկներում:

Անդրադառնալով գյուղական համայնքներում ներքին աուդիտի համակարգի ներդրման հարցին՝ Վ. Մահտեսյանը նշեց, որ հաշվի առնելով համապատասխան ռեսուրսների հետ կապված խնդիրները, որոշում է կայացվել հիշալ հարցին անդրադառնալ 2016թ.:

<u>Գնումների ընթացակարգերի բարելավում</u>

2012թ. հունվարի 1-ից գործարկվել է ՀՀ էլեկտրոնային գնումների համակարգը, որի արդյունքում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից բաց ընթացակարգով իրականացվող գնումների գործընթացները կազմակերպվում են էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am կայքի միջոցով: Մասնավորապես՝ 2012թ. ՀՀ պետական մարմինների կողմից էլեկտրոնային ձևով կազմակերպվել են շուրջ 51 գնման գործընթացներ: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից իրականացվել է նաև էլ. գնումների համակարգի գործարկման մշտադիտարկում, և պատվիրատուներին ու գնումների մասնակիցներին տրամադրվել է անհրաժեշտ

մեթոդական օժանդակություն: Ներկայումս աշխատանքներ են տարվում ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքով նախատեսված շրջանակային համաձայնագրերի միջոցով գնումները էլեկտրոնային ձևով՝ www.armeps.am կայքի միջոցով իրականացնելու ուղղությամբ:

ՀՀ ֆինանսների նախարարի 25.12.12թ. թիվ 1169-Ն հրամանով հաստատվել է «Գնումների վերաբերյալ տվյալների վերլուծության և էլեկտրոնային տեղեկատուի վարման կարգը (ներառյալ՝ հաշվետվության ձևը)», որով նախատեսվում է պատվիրատուների կողմից նախագծով հաստատվող ձևաչափով գնման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության տրամադրում գնումների աջակցման կենտրոնին: Վերջինս այդ տեղեկատվության հիման վրա իրականացնում է վերլուծություններ՝ ըստ գնումների արժեքային և(կամ) քանակական բնութագրիչների և դրանց տարբեր համակցությամբ:

Պետական պատվիրատուների կողմից գանձապետական համակարգում գնումների վերաբերյալ տեղեկատվության ամբողջական գրանցումն ապահովելու նպատակով “CLIENT-TRESUARY” – “LSFinance” (ԳԳՕ) համակարգերում մշակվել և 2012թ. դեկտեմբերի 1-ից ներդրվել է նոր ծրագրային փաթեթ, որով պետական պատվիրատուները պետության համար պարտավորություններ առաջացնող գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը՝ հաշվետվությունը, համակարգ մուտքագրում են ինքնուրույն: Այդ տեղեկատվության հետ մեկտեղ համակարգ է մուտքագրվում նաև գնման պայմանագիրը: Առաջին անգամ ստեղծվել է գնման պայմանագրերի ավտոմատ հաշվառման էլեկտրոնային շտեմարան: Նշված համակարգը հնարավորություն է տալիս նաև բացառել պետական կառավարման մարմինների կողմից թե՛ ձևական և թե՛ բովանդակային առումներով տարբերվող տեղեկատվության ներկայացումը ՀՀ ֆինանսների նախարարություն:

Գնումների էլեկտրոնային տեղեկատուում հրապարակված շրջանակային համաձայանգրերով կատարվող գնումների վերաբերյալ տեղեկատվության հիման վրա իրականացվել են վերլուծություններ և կազմվել ու հրապարակվել են ամսեկան հաշվետվություններ, որտեղ կարելի տեսնել, ըստ մարմինների և ըստ գնման առարկաների, մասնակիցների ներկայացրած առավելագույն, նվազա-գույն գները, հաղթող մասնակցիների գների կշռված և թվաբանական միջինը, ստանդարտ շեղումը, մասնակիցների անվանումը:

ՀՀ կառավարության 30.08.2012թ-ի թիվ 1104-Ն որոշման հիման վրա ՀՀ ֆինանսների նախարարությունը մեկ անձից կատարվող գնումների վերաբերյալ տեղեկատվությունը, այդ թվում՝ կնքված պայմանագրերը, հրապարակում է ՀՀ կառավարության www.e-gov.am կայքում:

Գնումների համակարգողների որակավորման գնահատման նպատակով 2012թ. ընթացքում կազմակերպվել են ՀՀ պետական կառավարման մարմինների, դրանց համակարգում գործող պատվիրատու հանդիսացող կազմակերպությունների (ԾԻԳ-եր, ՊՈԱԿ-ներ, ՓԲԸ-ներ և այլն) և ՀՀ քաղաքային համայնքների գնումների համակարգողների գնումների մասին ՀՀ օրենսդրության իմացության գնահատման քննությունները: Արդյունքում՝ նշված քննությունները հաջողությամբ հանձնել են ՀՀ պետական կառավարման մարմինների և դրանց համակարգում գործող պետական հիմնարկների թվով 191, ՀՀ պետական կառավարման մարմինների համակարգում գործող ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների թվով 268 և ՀՀ քաղաքային համայնքների թվով 42 գնումների համակարգողներ, որոնք ընդգրկվել են ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հրապարակվող գնումների որակավորված մասնագետների ցուցակում:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից 2012թ. ընթացքում կազմակերպվել է ՀՀ պետական կառավարման մարմինների, վերջիններիս ենթակա ՊՈԱԿ-ների և ՓԲԸ-ների գնումների մասնագետների, իսկ «Ուսուցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից՝ քաղաքային և գյուղական համայնքների գնումների մասնագետների վերապատրաստման դասընթացներ: Նշված դասընթացները շարունակվում են նաև 2013թ.:

Վ. Հոկտանյանի այն հարցին ի պատասխան՝ արդյոք տարվում են համապատասխան աշխատանքներ՝ կապված գնումների համար պատասխանատու պաշտոնատար անձանց վարքագծի կանոնների հարցի հետ, Վ. Մահտեսյանը պատասխանեց, որ գնումների վերաբերյալ ներկայիս օրենսդրությունը հարցի առնչությամբ պարունակում է որոշակի նորմեր: Սակայն այսօր ձեռնարկվում են համապատասխան քայլեր՝ ուղղված վարքագծի կոնկրետ կանոնների սահմանմանը, որը շուտով կներկայացվի հաստատման:

Պարտավորությունն, ըստ էության, կարելի է համարել կատարված:

<u>Բյուջեի պլանավորման և հաշվետվական համակարգերի բարելավում՝ ծրագրային բյուջետավորման ամբողջական կիրառման միջոցով</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը 2005 թվականից նախապատրաստական աշխատանքներ է իրականացնում բյուջետավորման մուտքերի (ծառայությունների մատուցման համար օգտագործվող ռեսուրսների) վրա հիմնված եղանակից արդյունքների վրա հիմնված (ծրագրային բյուջետավորման) եղանակին անցման նպատակով անհրաժեշտ պայմաններ ստեղծելու՝ ծրագրային բյուջետավորման պահանջներց բխող բյուջետավորման տարրերը փորձնական կարգով աստիճանաբար ներդնելու և այդ փորձնական ծրագրում ընդգրկված պետական կառավարման մարմինների շրջանակը տարեցտարի ընդլայնելու համար: Առաջին երկու տարիներին ծրագրային բյուջետավորման

ներդրման փորձնական ծրագրում ընդգրկվել են սոցիալական ոլորտի 4 պետական կառավարման մարմիններ, 2007թ. վերջին դրանց թիվը կազմել է 14, իսկ սկսած ՀՀ 2010թ.՝ այդ աշխատանքներում արդեն ընդգրկված են բոլոր պետական կառավարման մարմինները:

Փորձնական կարգով իրականացված աշխատանքների արդյունքների հիման վրա մշակվել և ՀՀ կառավարության 2008թ. նոյեմբերի 27-ի N 48/18 արձանագրային որոշմամբ հավանության է արժանացել Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի ծրագրավորման գործընթացի բարեփոխումների զարգացման հայեցակարգը, որի համատեքստում էլ շարունակվել են բարեփոխումների հետագա խորացման աշխատանքները: Ըստ այդմ՝ ՀՀ պետական բյուջեների նախագծերը, ավանդական ձևաչափին զուգահեռ, մշակվել են նաև ծրագրային բյուջետավորման պահանջներին համապատասխանող ձևաչափով և ներառվել են համապատասխան տարիների բյուջետային փաստաթղթերում:

ՀՀ 2012թ. բյուջետային գործընթացում փորձնական կարգով ներդրվել են ծրագրային բյուջետավորման պահանջներից բխող նոր տարրեր՝

ա. ՀՀ պետական բյուջեով ծախսային ծրագրեր իրականացնող բոլոր գերատեսչությունների գծով նոր ծրագրային կառուցվածքի և այդ ծրագրերի նոր դասիչների համակարգ, համաձայն որի էլ կազմվել են ՀՀ 2012 և 2013 թվականների պետական բյուջեները,

բ. 2012թ. բյուջետային գործընթացի շրջանակում փորձարարական երեք գերատեսչություններում (ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի, գյուղատնտեսության նախարարություններ, ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն) կազմել են յուրաքանչյուրում մեկական բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր), իսկ 2013թ. այդպիսի բյուջետային ծրագրի նկարագիր (անձնագիր) կազմվել է թվով ութ գերատեսչություններում՝ 10 բյուջետային ծրագրերի համար: Դրանք բոլորն էլ զետեղվել են ՀՀ ֆինանսների նախարարության պաշտոնական ինտերնետային կայքում: Բյուջետային ծրագրի նկարագիրը (անձնագիրը) սահմանում է տվյալ բյուջետային ծրագրով անհրաժեշտ ընթացիկ իրավիճակը նկարագրող հենանիշերը և թիրախները, ինչը ֆինանսների արդյունավետ պլանավորման (արդյունքի հիման վրա ծրագրավորման) համար առանցքային կարևորության խնդիր է:

Ծրագրային բյուջետավորման գործընթացը ինստիտուցիոնալ հիմքերի վրա դնելու և բարեփոխումների ներկայիս ձեռք բերված արդյունքները զարգացնելու ու անհրաժեշտ օրենսդրական հիմքեր ստեղծելու նպատակով մշակվել և ՀՀ ԱԺ է ներկայացվել «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին» և «Հայաստանի Հանրապետության գանձապետական համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը: ՀՀ ԱԺ կողմից 2013թ. մարտի 19-ին դրանք ընդունվել են առաջին ընթերցմամբ:

<u>Գույքի և եկամուտների հայտարարագրման թափանցիկության ապահովում</u>

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի անդամ Ա. Խուդավերդյանն իր խոսքում նշեց, որ հանձնաժողովն իր աշխատանքները սկսել է 2012թ. հունվարից: Այժմ արդեն բոլոր հայտարագրերը հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական կայք-էջում՝ համաձայն ՀՀ կառավարության որոշմամբ սահմանված հայտարարագրման ենթակա տվյալների ցանկի:

Հայտարարագրերի վերաբերյալ մամուլում տեղ գտած հրապարակումները (ավելի քան 35 առանձին հոդվածներ), ավաղ, եղել են ճանաչողական բնույթի, որոնցում բացակայել է մասնագիտական մոտեցումը: Հանձնաժողովին ուղղվել է նաև ավելի քան 20 դիմում՝ կապված բարձրաստիճան պաշտոնատար անձանց կողմից կատարված գործողությունների հետ: Դրանցից երկուսի վերաբերյալ հարուցվել է վարույթ, որն ընթացքի մեջ է, իսկ մյուսներին տրվել են պատշաճ պատասխաններ:

Հայտարարագրերի վերլուծության արդյունքում բացահայտվել է 25 անհամապատասխանություն, որոնց հիմնական պատճառները հայտարարագիրը ուղեցույցի պահանջներին չլրացնելն է կամ հայտարարագիր լրացնելու կանոններ չիմանալը:

Ներկայումս Համաշխարհային բանկի հետ համապատասխան ծրագրի շրջանակներում աշխատանքներ են տարվում հայատարարագրման ողջ համակարգի էլեկտրոնայնացման ուղղությամբ: Ծրագրի նպատակն է ապահովել հայտարարագրված տվյալների հավաստիությունը, ինչպես նաև հեշտացնել հայտարարագրերի՝ կայքում տեղադրելու գործընթացը:

Պարտավորությունը կատարված է:

<u>Տեղեկատվության ազատության վերաբերյալ պետական ծառայողների գիտելիքների և հմտությունների բարելավում</u>

Ինֆորմացիայի ազատության կենտրոնի գործունեության ուղղություններից մեկը պետական և համայնքային ծառայողների վերապատրաստումն է տեղեկատվության ազատության ոլորտում: Այդ առումով, կենտրոնը համագործակցում է ՀՀ կառավարության, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի հետ, գործում է համագործակցության հուշագիր ՀՀ տարածքային կառավարման նախարարության հետ: Արդեն հինգ տարի է, ինչ ծրագիրն իրականացվում է ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, որի ընթացքում

վերապատրաստվել է ավելի քան 400 պետական և համայնքային ծառայող: Ներկայումս (մայիս ամսին) նախատեսվում է 20-30 քաղաքացիական ծառայողների վերապատրաստում:

Կոռուպցիայի դեմ պայքար

ՀՀ արդարադատության փոխնախարար Ե. Կիրակոսյանը ներկայացրեց կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում առկա իրավիճակը և հիշյալ ոլորտում պայքարի արդյունավետության բարձրացմանն ուղղված հետագա քայլերը: Մասնավորապես՝ նշվեց, որ 2012թ. դեկտեմբերին կայացած Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի նիստում ամփոփվել են Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ. գործողությունների ծրագրի իրականացման արդյունքները: Նիստի ժամանակ ներկայացվել է գործողությունների ծրագրի կատարման մակարդակը, այն խնդիրները, որոնք առաջ են եկել գործողությունների իրականացման ընթացքում, ինչպես նաև այս կամ այն գործողության չկատարման կամ ոչ պատշաճ կատարման պատճառները: ՀՀ վարչապետի կողմից առաջարկվել է, մասնավորապես, ոլորտային մոտեցումը. այսինքն՝ ընտրել որոշակի ոլորտներ (մասնավորապես՝ կրթություն, առողջապահություն, դատաիրավական համակարգ) և փորձել պայքարը կազմակերպել՝ կենտրոնանալով այդ ոլորտներում կոռուպցիայի առաջացման հիմնական պատճառների վրա:

Փոխնախարարը հավելեց նաև, որ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության կողմից առաջարկվել է ներկայումս աշխարհում գործող կոռուպցիայի դեմ պայքարի քաղաքականության իրականացմանն ուղղված երեք մոդել՝ ունիվերսալ (ներառում է և՛ կանխարգելում և՛ հետաքննություն, գործում է մի շարք երկրներում, այդ թվում՝ Լեհաստանում, Լատվիայում, Լիտվայում), իրավակիրառ (վերջինս ավելի շատ հետաքննող մոդել է) և կանխարգելիչ մոդելներ: Մոդելներից որևէ մեկի ընտրության հարցը դեռևս գտնվում է քննարկման փուլում և, հավանաբար, կհաստատվի խորհրդի հաջորդ նիստում:

Հաջորդ խնդիրը, որին անդրադարձավ Ե. Կիրակոսյանը, վերաբերում էր 2009-2012թթ. գործողությունների ծրագրի կատարման առնչությամբ ներկայացված հաշվետվություններին: Դրանց վերանայման արդյունքում պարզվել է, որ շատ գերատեսչություններ չեն ներկայացրել ճիշտ կամ ամբողջական տեղեկատվություն, և իրականում շատ գործողություններ մնացել են անկատար: Արդյունքում՝ ՀՀ արդարադատության նախարարությունը դիմել է այդ մարմիններին՝ պահանջելու համապատասխան կատարում և փորձելու վերջնականացնել այդ գործընթացը:

Իր խոսքում Ե. Կիրակոսյանը նշեց, որ չնայած ներկայումս առկա է կոռուպցիայի դեմ պայքարի համապարփակ քաղաքականության իրականացման որոշակի ընդհատում, սակայն ՀՀ կառավարության կողմից իրականացվող շատ միջոցառումներ ուղղված են հենց կոռուպցիայի դեմ պայքարին կամ կոռուպցիայի նվազեցմանը: Էլեկտրոնային կառավարման համակարգի մի շարք ծրագրերի առանցքային նպատակը կոռուպցիայի դեմ պայքարն է: Փոխնախարարը, մասնավորապես, անդրադարձավ ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնած հանրային ռեգիստրների ստեղծման գաղափարին, որի նպատակն է միավորել պետության կողմից քաղաքացուն մատուցվող ծառայությունները մեկ պատուհանի սկզբունքով (անձնագրերի ստացում, ԶԱԳՍ-երի, ռեգիստրի կողմից մատուցվող ծառայություններ, շարժական գույքի գրանցման հետ կապված ծառայություններ և այլն): Այժմ հայեցակարգը ներկայացվել է ՀՀ կառավարություն և այն գտնվում է համաձայնեցման փուլում:

Վ. Հոկտանյանի այն հարցին, թե ինչ զարգացումներ կան Հայաստանի հակակոռուպցիոն ռազմավարության մեջ նշված մասնագիտացված կառույցի ստեղծման ուղղությամբ, Ե. Կիրակոսյանը պատասխանեց, որ ներկայումս վերոնշյալ մոդելների քննարկումն ու ընտրության հարցն ավելի առաջընթացային քայլ է, քան հենց քարտուղարության ստեղծումը, և այդ մոդելներից որևէ մեկի ընտրության դեպքում քարտուղարության ստեղծման հարցն ինքնաբերաբար լուծվելու է:

Վ. Հոկտանյանի երկրորդ հարցին ի պատասխան՝ երբ հասանելի կլինեն ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության 2009-2012թթ. գործողությունների ծրագրի արդյունքների մոնիտորինգի հաշվետվությունները, Ե. Կիրակոսյանը կոնկրետ ժամկետներ չնշեց, բայց վստահություն հայտնեց, որ ամփոփվելուն և պատրաստ լինելուն պես՝ դրանք կտեղադրվեն համապատասխան կայք-էջում:

Հարցի համատեքստում Տ. Գևորգյանը նշեց, որ www.e-gov.am կայք-էջում ավելացվել է առանձին էջ ՀՀ վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքների վերաբերյալ:

«Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան համաժողովի մասին. Լ. Դոյդոյանն իր խոսքում նշեց, որ ԻԱԿ-ը՝ ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ, նախաձեռնել է Երևանում «Բաց կառավարման գործընկերություն/Հայաստան» համաժողովի անցկացում 2013թ. հունիսին 14-ին: Համաժողովի նպատակն է գնահատել կառավարություն-քաղաքացիական հասարակություն համագործակ-ցության կամ երկխոսության, OGP գործողությունների ծրագրի կատարման արդյունքները, որքանով է քաղաքացիական հասարակությունը իրազեկված այդ գործընթացների մասին և այլն:

ԲԿԳ կայք-էջի ստեղծման մասին. Տ. Գևորգյանն, անդրադառնալով ԲԿԳ կայք-էջի ստեղծմանը, նշեց, որ «Հելիքս» ընկերության աջակցությամբ նախատեսվում է OGP/Armenia կայքի ստեղծում: Սակայն մինչ կայքի ստեղծումը Տ. Գևորգյանն առաջարկեց www.gov.am-ում ավելացնել OGP վերաբերյալ առանձին նախնական էջ՝ հետագա ընդլայնման և զարգացման հնարավորություններով:

Հանդիպման ավարտին Տ. Գևորգյանն իր եզրափակիչ խոսքում նշեց, որ ամփոփելով Բաց կառավարման գործընկերության շրջանակներում Հայաստանի ստանձնած պարտավորությունների կատարման արդյունքները՝ վստահաբար կարելի է փաստել, որ Հայաստանը թե՛ իր պարտավորությունների ծավալով և թե՛ դրանց իրականացման ընթացքով զբաղեցնում է բավական առաջատար դիրքեր: Այդ գործընթացում բարձր է գնահատվում, հատկապես, հայաստանյան պարտավորությունների կատարման շրջանակներում ներգրավված բոլոր գործընկերների ցուցաբերած աջակցությունը և ներդրած ջանքերը:

Տ. Գևորգյանը, միաժամանակ, կոչ արեց քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին ցուցաբերել առավել ակտիվ մասնակցություն վերոնշյալ գործընթացներում՝ հնարավորինս արդյունավետորեն օգտվելով «Բաց կառավարման գործընկերություն» նախաձեռնության գաղափարախոսության ընձեռած հնարավորություններից: